ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը ք. Նյու Դելի (Հնդկաստանի Հանրապետություն) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Էդուարդ Հակոբյան – ՀՀ ՊԵԿ նախագահ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Հնդկաստանի Հանրապետություն, ք.Նյու Դելի, 2025թ. նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը:

3. Հրավիրող կողմը.

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հարկման նպատակով թափանցիկության և տեղեկությունների փոխանակման Գլոբալ ֆորումի Ասիական նախաձեռնության 9-րդ բարձրաստիճան հանդիպմանը և ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի տարեկան 18-րդ համաժողովին:

5. Քննարկված թեմաները.

- Ասիական նախաձեռնության հանդիպմանը ներկայացվեց նախաձեռնության 2025-2026 թվականների աշխատանքային ծրագրով կատարված աշխատանքները և առաջիկա միջոցառումների տեսլականը,
- Իրականացվեց Ասիական նախաձեռնության շրջանակում ստեղծված աշխատանքային խմբերի կողմից 2025 թվականին կատարված աշխատանքների ամփոփումը,
- Իրականացվեց ըստ հարցման տեղեկությունների փոխանակման ստանդարտների ներդրման նպատակով իրականացված փորձագիտական գնահատման գործընթացների

վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում՝ ամփոփելով ըստ երկրների վիճակագրությունը և կարևորելով այս ուղղությամբ անդամ երկրների կողմից տեղեկությունների փոխանակման արդյունքների ազդեցության գնահատման գործիքակազմի ներդնումը,

- Ներկայացվեց միասնական հաշվետվողական ստանդարտի ներդրման առաջընթացի վերաբերյալ զեկույցներ, երկրների հաջողության պատմություններ, վիճակագրություն, ինչպես նաև Ասիական նախաձեռնության աշխատանքային խմբի կողմից մշակված՝ ֆինանսական հաշիվների վերաբերյալ փոխանակվող տեղեկությունների օգտակարության գնահատման մասով գործիքակազմը,

- Իրականացվեց կրիպտոակտիվների հաշվետվողականության ստանդարտի ներդրման ուղղությամբ կատարված քայլերի, ճանապարհային քարտեզի և երկրների կողմից ներկայացված զեկույցների քննարկում՝ կոչ անելով հնարավորինս արագ միանալ ստանդարտին,

- ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի տարեկան համաժողովի ընթացքում Քարտուղարության կողմից ամփոփ ներկայացվեցին 2025 թ. կատարված աշխատանքները և քննարկվեցին հետագա ծրագրերի հիմնական ուղղությունները,

- Ներկայացվեց նաև ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի կողմից ստեղծված աշխատանքային խմբերի կատարված աշխատանքների զեկույցը՝ ամփոփելով այդ ուղղությամբ մշակված տեսլականները,

- Համաժողովին ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի քարտուղարության կողմից հայտարարվեց «Գաղտնիության և տվյալների պաշտպանության» ապահովմանն ուղղված գնահատման աշխատանքների երրորդ փուլի մեկնարկը՝ ներկայացնելով անդամներին կիբեռանվտանգության ապահովման համակարգը և հիմնական ռիսկերը այս ուղղությամբ,

- Ամփոփվեց ՏՀԶԿ Գլոբալ ֆորումի ներքո ստեղծված տարածաշրջանային նախաձեռնությունների աշխատանքային ծրագրերով 2025 թվականին կատարված աշխատանքները և նախանշվեցին առաջիկա անելիքները,

- Քննարկվեց տարածաշրջանային նախաձեռնությունների անդամ հանդիսացող երկրների ցանկի ընդլայնմանն ուղղված քայլերը,

- Միջազգային մի շարք դոնոր կազմակերպությունների ներկայացրեցին զեկույցներ վերոնշյալ թեմաների շուրջ,
- Գլոբալ ֆորումի կողմից իրականացվեց զեկույցների ներկայացում անդամ պետությունների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ և քննարկվեցին համագործակցության ուղիները,
- Ընդունվեց հայտարարություն ՏՀՀԿ Գլոբալ ֆորումի աշխատանքի տարեկան արդյունքների մասին և սահմանվեցին առաջիկա աշխատանքները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հայաստանը, հանդիսանալով Գլոբալ ֆորումի Ասիական նախաձեռնության 2024-2025 թվականներին համանախագահ երկիր, Մալդիվների հարկային մարմնի ղեկավարի հետ համատեղ վարել է Ասիայի նախաձեռնության 9-րդ բարձրաստիճան հանդիպումը, որի շրջանակներում քննարկվել են մի շարք տարածաշրջանային խնդիրներ: Մասնավորապես՝ նախաձեռնության անդամ հանդիսացող երկրները ներկայացրել են, թե ինչ միջոցառումներ են իրականացվում ըստ հարցման տեղեկությունների փոխանակման գործիքի առավել արդյունավետ օգտագործման, մեխանիզմների կատարելագործման և փոխանակման արդյունքում հնարավոր հարկային եկամուտների գնահատման ուղղությամբ: Աշխատաժողովին ներկայացվել են նախաձեռնության ներքո ստեղծված «Միասնական հաշվետվողական ստանդարտով փոխանակվող տեղեկությունների օգտակարության գնահատման» աշխատանքային խմբի կողմից 2025 թվականին մշակված երկու փաստաթուղթ, որոնք անդամ երկրների համար առանցքային գործիք են հանդիսանում ֆինանսական հաշիվների վերաբերյալ ստացված տեղեկությունների վերլուծական կարողությունների զարգացման համար: Հայաստանն ևս պատրաստակամություն է հայտնել առաջիկայում ձեռնարկել քայլեր մշակված գործիքների ներդրման ուղղությամբ՝ ընդգծելով վերլուծական կարողությունների շարունակական զարգացման անհրաժեշտությունը:

Գլոբալ ֆորումի տարեկան համաժողովին որպես ՀՀ ՊԵԿ նախագահ հանդես եմ եկել նաև պանելային բարձրաստիճան քննարկման ընթացքում՝ անդրադառնալով Ասիական նախաձեռնության համանախագահության ընթացքում տարածաշրջանում անդամ երկրների կողմից ՏՀՀԿ Ստանդարտներով փոխանակվող տեղեկությունների

արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներին և արձանագրված ձեռքբերումներին: Ընդգծվել է, որ Հայաստանը 2025 թվականի աշնանն իրականացրել է ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակումը, ինչը կարևոր նշանակություն ունի հարկային թափանցիկության արդյունավետության բարձրացման գործում: Ներկայացվել է, որ տեղեկությունների փոխանակման համակարգը վերջին տարիներին արդյունավետորեն կիրառվում է ինչպես տարածաշրջանի երկրների, այնպես էլ ՀՀ հարկային մարմնի կողմից՝ ունենալով բազմաթիվ հաջողության օրինակներ և էականորեն նպաստելով հարկային կարգապահության բարձրացմանը:

Պանելային քննարկման բոլոր մասնակիցները միաձայն ընդգծեցին, որ Գլոբալ ֆորումի անդամ երկրների միջև արդյունավետ համագործակցությունը կարևոր նախադրյալ է թե՛ առանձին երկրների, թե՛ համաշխարհային հարկային եկամտի հավաքագրման արդյունավետության բարձրացման համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Ասիական նախաձեռնության հանդիպման ընթացքում Քարտուղարությունը շնորհակալություն հայտնեց Հայաստանին նախաձեռնության 2024-2025 թվականների համանախագահությունն արդյունավետ իրականացնելու համար: Միաժամանակ 2027-2028 թվականների համանախագահող երկիր ընտրվեց Մալայզիան:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց իրականացնել անդամ երկրների միջև գիտելիքի փոխանակման միջոցառումներ՝ բարձրացնելու համար ՏՀԶԿ Ստանդարտների ներդրման գործընթացների արդյունավետությունը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է, որ հանդիպումների ընթացքում երկրները ներկայացնեն ավելի գործնական խնդիրներ և դրանց լուծման օրինակներ, ինչպես նաև հաշվետվություններ ՏՀԶԿ քարտուղարության կողմից մշակված հարցումների հիման վրա՝ տեղեկությունների փոխանակման ներուժի գնահատման հարցաթերթիկի ու ազդեցության գնահատման գործիքի ներդրման ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Էդուարդ Հակոբյան

08.12.2025թ.

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018թ.
սեպտեմբերի 19-ի N1230-Ն
որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **1093-Ա**
3. Անունը, ազգանունը,զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ **Հնդկաստանի Հանրապետություն՝ քաղաք Նյու Դելի**
5. Գործուղման ժամկետները՝ **30.11.2025-04.12.2025թթ.,**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցների հաշվին**

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը _____
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)
☐ ա.փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
☑ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Էդուարդ Հակոբյան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	511,809.00	**511.81**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	INR 20,650.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	87,374.28	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	349,497.00	**349.50**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 82.00	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	31,287.10	
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	156,435.00	**156.44**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		-
	Մուտքի արտոնագրի վճար		-
	Այլ ծախսեր (*նկարագրել*)		-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		**1,017.74**	**1,017.74**

Գլխավոր ֆինանսիստ _____ ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ 09.12.2025թ.